

սաղէմ, զի երթեալ Հովանայն զամենայն գործնառութիւն Ս. Աթոռոյն, որպէս երէկն եւ յեռանդն, եւ ամենայն առ եւ տուր ընդ մուտն եւ ընդ ելն իւրով իշխանութեամբ եղիցի՝ առանց ուրուք հակառակութեան, զի ինձ հաճելի է եւ հաւանելի: Բայց միայն էմբ ու պերաթի անունն իմ վերայ մնացէ ժամանակ ինչ, որ ես նովին անուամբ գնացեալ շրջեցայց յաշխարհն յԱրեւելից առ ի զտանել հնարս ազատութեան պարտուցս եւ վերստին հաստատել զառաջին սէրն ի մէջ երկուց աթոռոցն սրբոց, եւ յեա այնորիկ եկեալ թեւ իմ արարից առ Եղիազար Հոգեւորտէրն զինչ եւ իցէ զամենայն առ իս, թէ՛ էմբ եւ թէ՛ պերաթ, թեմեսուկ եւ հուճէթ եւ այլ զինչ եւ պիտոյացի՝ առանց հակառակութեան, կամաւ եւ յօժարութեամբ իմով: Եւ եթէ այնուհետեւ ախորժ թուիցի երկուցուցս կամաց՝ եղէց անդ իբրեւ զմի աշակերտացն իւրոց, ապա թէ ոչ՝ գնացից ուր եւ կամիցիմ, սիրով եւ առանց տրտնջանաց» (23):

Այսպէս հաշտութեան ճամբան քացուած էր Յակոբ Կաթողիկոսին առջեւ. 24 Աեպտեմբեր 1667ի իր նամակին մէջ Ջուզայեցի Հայրապետը կը յիշեցնէ Եղիազարի նախկին ուխտը եւ իր հակառակութիւնը ընդդէմ Կաթողիկոսին երեք տարիներէ ի վեր. փառք

---

(23) Գիւամ Ս. Յակոբայ. Սիւն. ԺԾ. Տաքի, Նոր Երզան, 1941, Մայիս, քիւ 5. էջ 126-127: